ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1953 Общественные науки

Հ. Թրյան

ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Մերձավոր և Միջին Արևելքը իր շուկաներով, նավթային խոշոր պաշարներով և ռազմա-ստրատեգիական դիրքով բացառիկ տեղ է գրավում ամերիկա-անգլիական իմպերիալիստների փոխհարաբերությունների մեջ. Այդ երկրները, օտարերկրյա իմպերիալիստների և տեղական իշխող դասակարգերի գիշատիչ շահագործման հետևանքով, դեռևս մնում են չափազանց հետամնաց և ագրարային վիճակում, ֆեոդալական մնացուկներով, գյուղատնտեսության ցածր մակարդակով և արդյունաբերության չնչին զարգացմամբ։

Մերձավոր և Միջին Արևելքի գլխավոր հարստությունը հանդիսացող նավթային խոշոր պաշարների շահագործումը մինչև այսօր հիմնականում մնում է օտարերկրյա մոնոպոլիստների ձեռքում, այդ իսկ պատճառով, տեղական ժողովուրդները չեն կարողանում օգտվել իրենց երկրների այդ վիթխարի հարստություններից։

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, անգլիական իմպերիալիզմը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում տիրապետող դիրք էր գրավում, իր ձեռքում կենտրոնացնելով նավթային աղբյուրների խոշորագույն մասը, հաղորդակցության միջոցների գլխավոր հանգույցները և վերջապես ներքին և արտաքին մեծաքանակ առևտրի մոնոպոլիան։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը, ղեկավար դեր սկսեց խաղալ գաղութները և ազդեցության շրջանները իմպերիալիստական պետությունների միջև վերաբաշխելու գործում։ Մերձավոր և Միջին Արևելքը դարձավ ամերիկյան մոնոպոլիստների շահագրգռության հիմնական օբյեկտներից մեկը։ Այդ երկրների նավթը, ռազմա-ստրատեգիական նշանակությունը, սպառման շուկաները է՛լ ավելի ուժեղացրին ամերիկյան իմպերիալիստների շահագրգռվածությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նկատմամբ, և ավելի սրեցին ամերիկա-անգլիական իմպերիալիստների միջև վաղուց գոյություն ունեցող հակասությունները։

Երկրորդ համաշխարհային պատերազմը հազիվ վերջացած, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում գործող «Ամերիկյան տնտեսական միսիայի» նախագահ Կլբբբտսոնը առաջ քաշեց այդ երկրները ամերիկյան էքսպանսիայի ենթարկելու անհրաժեշտության հարցը։ Մինչ այդ՝ Ուոլլ ստրիտի մոնոպոլիստները արդեն տարածել էին իրենց գիշատիչ գործունեությունը նաև Մերձավոր և Միջին Արևելքում։

Անգլիական իմպերիալիստները, որոնց հաջողվել էր Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծել բրիտանական նավթային բլոկ, պատերազմից հետո ամերիկյան նավթային մոնոպոլիստների ուժեղ ճնշման տակ զիջեցին իրենց հեգեմոն դիրքերը այս վերջիններին։ Եթե առաջ անգլիական

մոնոպոլիստները իրենց ձեռքին էին պահում Մերձավոր և Միջին Արևելքի նավթային պաշարների խոշորագույն մասը, ապա ներկայումս՝ Սաուդական Արաբիայի նավթի խոշոր պաշարների հայտնաբերումից ու իրանական նավթի ազգայնացումից հետո, այս ասպարեզում արդեն գերիշխող դիրք են գրավում ամերիկյան մոնոպոլիաները։ Եթե առաջ անգլիական իմպերիալիզմը իր ձեռքին էր պահում գնալի այդ երկրները տանող շրջային կոմունիկացիաները, այժմ Միջերկրական ծովում գերիշխող դիրք է գրավել ամերիկյան նավատորմը և Պարսից ծոցում կան ամերիկյան բազմաթիվ բազաներ։ Եթե առաջ այս երկրներում կային միայն անգլիական օդանավակայաններ, այժմ, այդ տերիտորիաների օդային տարածությունների հսկողությունը նույնպես անցել է ամերիկացիների ձեռքը։

Ինքնին հասկանալի է, որ ամերիկյան էքսպանսիայի այս տարածումը ուժեղացնում է անգլո-ամերիկյան հակամարտությունը։ Բրաղարձությունները ցույց են տալիս, որ Անգլիան իր դիրքերը հեշտությամբ չէ, որ զիջում է։ Անգլիական և ամերիկյան խոշոր մոնոպոլիստների միջև մղվող պայքարը ընդունել է շատ սուր բնույթ։ Այդ պայքարում իմպերիալիստական երկու պետությունների մոնոպոլիստները դիմում են ամեն միջոցի՝ անգամ կառավարական հեղաշրջումների և բարձրաստիճան պետական գործիչների սպանության։ Փաստերը ցույց են տալիս, որ Մերձավոր և Միջին Արևելքում այժմ քաղաքական իրադարձությունների վրա մեծագույն չափով ազդում է նավթային խոշոր մոնոպոլիստների միջև մղվող պայքարը։

Անգլիական և ամերիկյան իմպերիալիստների միջև այս երկրներում ծավալվող պայքարի էությունը լավ ըմբռնելու համար անհրաժեշտ է ծանոթանալ Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունաբերության վիճակի հետ։

* * *

Մերձավոր և Միջին Արևելքը իր նավթի պաշարներով կապիտալիստական աշխարհում գրավում է առաջին տեղը։

1950 թվականի տվյալներով Մերձավոր և Միջին Արևելքի նավթային պաշարները հասնում էին 6,3 միլիարդ տոննայի, որը կազմում է կապիտալիստական երկրների նավթի ընդհանուր պաշարների 50,6[1] տոկոսը, մինչդեռ ԱՄՆ-ում այդ տոկոսը հասնում է հազիվ 30,2-ի (տես աղյուսակը)։

Կապիտալիստական աշխարհի նավթի պաշարները ըստ 1950 թ. տվյալների

	Միլիարդ տոննաներով	Տոկոս
Կապիտալիստական երկրները միասին վերցրած	13,0	100
Մերձավոր և Միջին Արևելքը	6,59	50,6
Հյուսիսային Ամերիկա	3,93	30,2
Հարավային Ամերիկա	1,46	11,2
Մյուս երկրները միասին վերցրած	1,04	8,0

[1] Ուրիշ տվյալների համաձայն 8,7 միլիարդ տոննա, այսինքն 58% (տես Правда, 11 июня, 1953 г., Борьба Монополий Англии и США за ближневосточную нефть. կամ 60% տես Новое время, № 26, 24 июня 1953 г., стр. 5).

1929 թվականին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից ստացվում էր կապիտալիստական երկրների ընդհանուր նավթահանման 3 տոկոսը միայն։ Նույն թվականին Հյուսիսային Ամերիկան (ԱՄՆ-ը, Կանադան և Մեքսիկան միասին վերցրած) նավթահանում էին ընդհանուրի 71 տոկոսը, Հարավային Ամերիկան՝ 13 տոկոսը։ Այժմ այս հարաբերությունը փոխվել է. Հյուսիսային Ամերիկան՝ 55 տոկոս, Հարավային Ամերիկան՝ 17 տոկոս, Մերձավոր Արևելքը՝ 17 տոկոս, և մյուս երկրները՝ 11 տոկոս։

Չնայած այն բանին, որ ԱՄՆ-ը նավթահանման տեսակետից գրավում է առաջին տեղը, և շարունակում է իր ձեռքին պահել կապիտալիստական աշխարհի նավթի պաշարների զգալի մասը, հետևաբար ի վիճակի է նավթի իր կարիքները երկար ժամանակ իր սեփական աղբյուրներից լրիվ կերպով ապահովել, սակայն Ուոլլ ստրիթի մագնատները առավելագույն շահույթներ կորզելու նպատակով, վարում են օտար երկրների, այդ թվում Մերձավոր Արևելքի նավթի պաշարների ձեռք բերման գիշատիչ քաղաքականություն։

«Միջին Արևելքի նավթը,—ասում է ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի աշխատակիցներից Կերմիտ Ռուզվելտը,—ԱՄՆ-ի ներքին պահանջների համար անհրաժեշտ չէ, քանի որ մեր երկիրը այդ նյութից մեծ քանակությամբ ստանում է իր ընդերքից»[1]։ Սակայն, նշում է նույն հեղինակը, «...Եթե ամերիկյան ընկերությունները անտարբեր մնան Միջին Արևելքի նավթի նկատմամբ, ապա օտար ընկերությունները ԱՄՆ-ի բացակայությունից օգտվելով, այդ շրջանում տեր ու տիրական կդառնան»[2]։ Ռուզվելտը, այսպիսով, ընդունելով հանդերձ ԱՄՆ-ի ներքին սպառումների համար Մերձավոր Արևելքի նավթի ոչ անհրաժեշտությունը, փորձում է արդարացնել ամերիկյան նավթային մոնոպոլիաների ոտնձգությունը այդ երկրներում։

1952 թվականի տվյալները ցույց են տալիս, որ Մերձավոր Արևելքը (չհաշված Իրանը) նավթահանելով 105 միլիոն տոննա, կապիտալիստական երկրների շարքում երկրորդ տեղի համար մրցման մեջ է մտել Հարավային Ամերիկայի հետ։ Դեռևս 1939 թվականին Մերձավոր Արևելքը նավթահանել էր 17 միլիոն տոննա նավթ, որից 2·6 միլիոնը եղել էր ամերիկյան բաժինը։ Այժմ ամերիկյան մոնոպոլիստների բաժինն է 67,5 միլիոն տոննա[3]։

1952 թվականի դեկտեմբերին, Մերձավոր և Միջին Արևելքի նավթավայրերից առաջին տեղը գրավեց Բուրգանը (Կվեյթում), որը դարձավ կապիտալիստական աշխարհի ամենարարձր արտադրողունակություն ունեցող նավթավայրը։ Այդ նավթավայրը նույն թվականին տվել է երկրի ընդհանուր նավթահանման (մոտ 38 միլիոն տոննայի) 95 տոկոսը։ Այնուհետև գալիս է Արկայիկի նավթավայրը (Սաուդյան Արաբիայում), և վերջապես Աղաժարին (Իրանում)։ Այս վերջինում հանքահանման գործողությունները դադարեցվել են 1951 թ. օգոստոսից։

Այս երեք նավթավայրերը միասին վերցրած 1951 թվականին տալիս

---

[1] *K. Roosevelt*, Arabs, Oil and History, New York, 1949, p. 31.
[2] Ibid, p. 27.
[3] *Տես այս մասին* Вопросы экономики, № 1, январь, 1953, стр. 65.

էին Մերձավոր և Միջին Արևելքի նավթի 85 տոկոսը և կապիտալիստական աշխարհի նավթահանման ավելի քան 12 տոկոսը։

Կապիտալիստական երկրների նավթարդյունաբերության մեծ մասի կարտելացման հետևանքով ԱՄՆ-ի խոշոր մոնոպոլիստներին հաջողվում է համաշխարհային շուկաներում տիրապետող դիրք գրավել։ Այս պատճառով նրանք այժմ Եվրոպայի, Աֆրիկայի և մասամբ Ասիայի շուկաները ողողել են Մերձավոր Արևելքի նավթով, ձեռք բերելով նույն առավելագույն շահույթները, և նույնիսկ ավելի բարձրը, քան ինչ որ պիտի ձեռք բերեին իրենց սեփական նավթի վաճառումով։

Այս երկրների նավթի նկատմամբ ամերիկյան և անգլիական մոնոպոլիստների շահագրգռվածությունը բացատրվում է նաև այլ հանգամանքներով։ Մերձավոր և Միջին Արևելքի նավթավայրերը սնհամեմատ ավելի արտադրողունակ են, քան այլ շրջանների նավթավայրերը։ Բացի այդ այս երկրներում գոյություն ունի առատ և էժան բանվորական ուժ։ Եվ վերջապես, այն հանգամանքը, որ այս երկրները գտնվում են համաշխարհային ճանապարհների վրա, համաշխարհային շուկաների կենտրոնում, հնարավոր է դարձնում տրանսպորտի համեմատաբար ավելի ցածր գներով նավթը փոխադրել Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի սպառման վայրերը։

Այս բոլորից հետո պարզ է դառնում, թե ինչու ամերիկյան իմպերիալիստները համաշխարհային տիրապետության համար Անգլիայի դեմ իրենց մղած պայքարում այնքան մեծ նշանակություն են տալիս Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին։

* * *

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների սիստեմում նավթը առաջին անգամ հայտնաբերվեց Իրանում և մինչև այժմ, արտադրողականության տեսակետից, նա դեռևս շարունակում է գրավել առաջին տեղերից մեկը այդ երկրներում։

Իրանի նավթային զոնաները գտնվում են երկրի հարավ-արևմուտքում՝ Իրաքի սահմանամերձ շրջաններում, հյուսիսում ՍՍՌՄ-ի՝ սահմանամերձ հարավային Ադրբեջանում և Կասպյան ծովափնյա շրջաններում՝ Խորասանում, և վերջապես արևելքում Լյուտի անապատի ծայրամասում՝ իրանական Բելուջիստանում։ Երկրի կենտրոնական շրջանում՝ Դաշտի-Կավիրում նույնպես նավթային հարուստ պաշարների հետքեր կան։ Ներկայումս լայն մասշտաբներով շահագործվում են միայն հարավ-արևմտյան ծովամերձ շրջանի նավթային հարստությունները, որովհետև անգլո-ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստների համար ձեռնտու չէ Իրանի հեռավոր շրջանների նավթային հարստությունների շահագործումը, որը կապված է փոխադրական մեծ ծախսերի հետ։ Օրինակ, ամերիկյան նավթային «Ամիրանիան Օյլ Կոմպանի» ընկերությունը Իրանի հյուսիս-արևելյան շրջանում հետազոտական աշխատանքները դադարեցրեց այն պատճառով, որ փոխադրման դժվար և մեծածախս պայմանները բարձրացնում էին նավթի ինքնարժեքը, զրկելով այդ ընկերությանը «Անգլո-Իրանական ընկերության» հետ մրցելու հնարավորությունից։

Իրանում նավթը առաջին անգամ հայտնաբերվեց 1908 թվականին

Մասջիդ-ի Սուլեյմանում՝ Պարսից ծոցից 200 կիլոմետր հյուսիսում։ Այդ հայտնաբերումից մի տարի անց, 1909 թ. կազմվեց «Անգլո-Պերժըն Օյլ Կոմպանի»-ն, որը հետագայում վերանվանվեց «Անգլո-Իրանիան Օյլ Կոմ-պանի»։

1914 թվականին Իրանի նավթի տարեկան արտադրությունը կազ-մում էր ոչ ավելի, քան 350 հազար տոննա։ Անգլիական ռազմական նա-վատորմը այդ թվականներին դեռ նոր էր անցել մոտորային շարժիչի։ Այդ հանգամանքը հրատապ հարց էր դնում անգլիական կառավարության առաջ՝ ապահովել ռազմա-ծովային նավատորմը համապատասխան վառելանյու-թով։ Բրիտանական ռազմա-ծովային մինիստրությունը Վինստոն Չերչիլի առաջարկով 1914 թ. ձեռք է բերում «Անգլո-Պերժընշ»-ի բաժնեթղթերի 52,5 տոկոսը։

Առաջին իմպերիալիստական պատերազմը խանգարում է «Անգլո-Պերժընշ»-ի հետազոտական աշխատանքներին։ Պատերազմից անմիջապես հետո, անգլիական կառավարությունը մեծ թափով վերսկսում է նավթա-հետազոտական աշխատանքները։ Արդեն 1919 թ. Մասջիդ-ի-Սուլեյմանի հանքավայրից ստացվեց մեկ միլիոն տոննա նավթ։ Շարունակվող հետա-զոտական աշխատանքները 1923 թ. հայտնաբերեցին Նաֆտ-ի-Շահ նավթա-վայրը, որը գտնվում է Բաղդադի հյուսիս-արևելքում՝ Իրաքի սահմանա-մերձ շրջանում։ Տեխնիկական դժվարությունների հետևանքով այս նավ-թավայրը շահագործման հանձվեց միայն 1935 թ.։ 1928 թ. հայտնաբերվե-ցին երկու չափազանց հարուստ նավթավայրեր ևս, Հաֆտ-Կելը (Մաս-ջիդ-ի-Սուլեյմանից 75 կիլոմետր հարավ-արևելք) և Գաչ-Սարանը (ավելի հարավ, դրեթե Պարսից ծոցի ափին՝ Զագրոսյան լեռների լանջին)։ Այս նավթավայրերից առաջինի շահագործումը հնարավոր դարձավ 1929 թ., երկրորդինը 1940 թ., երբ յուրաքանչյուր նավթավայրից դեպի Աբադանի նավթամշակման գործարանները կառուցվեցին նավթամուղեր։ Աբադան սահմանակից է Իրաքին և գտնվում է Շատտ-էլ-Արաբի գետաբերանում, Բասրայի հյուսիսում։

1934 թ. հայտնաբերվեց Նաֆտ-Սաֆիդի հանքավայրը, որը գտնվում է Մասջիդ-ի-Սուլեյմանի և Հաֆտ-Կելի միջև, և ենթադրվում է, որ նա կապ ունի վերջինիս նավթակիր երակների հետ։ Այս հանքավայրի շահա-գործումը հնարավոր դարձավ 1945 թ., երբ նա ևս նավթամուղով միաց-վեց Աբադանի նավթամշակման սիստեմին։ 1937 թ. հայտնաբերվեցին ևս երկու նոր հանքավայրեր՝ Ագա-Ժարիում և Պազանունում, որոնք գտնվում են Հաֆտ-Կելի և Գաչ-Սարանի միջև։

Արտադրողականության տեսակետից, Մերձավոր և Միջին Արևելքի և այդ թվում Իրանի հորերի կարողությունը շատ բարձր է. օրինակ, Արևելյան Տեկսասում, որը նավթային պաշարներով ԱՄՆ-ի ամենահա-րուստ շրջանն է համարվում, 1947 թ. 24000 հորերից ստացվել է 17 մի-լիոն տոննա նավթ, մինչդեռ այդ նույն ժամանակաշրջանում Մասջիդ-ի-Սուլեյմանում 23 հորերից ստացվել է 10 միլիոն տոննա նավթ։ Այլ կերպ ասած Իրանի մի նավթահորի միջին արտադրողականությունը 615 անգամ ավելի բարձր է, քան ԱՄՆ-ի հորերը։

Իրանի նավթի մշակումը կատարվում է տեղում՝ Աբադանում, որտեղ գործում է կապիտալիստական աշխարհի ամենախոշոր նավթամշակման

գործարանը։ Աբադանի նավթամշակման գործարանի թորման կարողությունն է տարեկան 25-ից 30 միլիոն տոննա։ Նրա հիմնադրման թվականից մինչև 1951 թ. մշակվել է 325 միլիոն տոննա նավթ։

Աբադանի նավթամշակման գործարանները նշանավոր են նաև նրանով, որ այնտեղ հնարավոր է մշակել նավթի բոլոր ֆրակցիաները և մշակման համար անհրաժեշտ քիմիական զանազան նյութերը, մինչդեռ նման կոմպլեքսային նավթամշակման գործարաններ հազվադյուտ են կապիտալիստական աշխարհում։

Այս բոլորի լույսի տակ միանգամայն պարզ է դառնում, թե ինչքան ուժեղ հարված էր անգլիական նավթային մոնոպոլիստների համար, Իրանի նավթային հարստությունների հետ միասին Աբադանի նավթաթորման գործարանի պետականացումը իրանական կառավարության կողմից։

Նավթամշակման գործարանների սիստեմին կից՝ Աբադանում կառուցված է նավթաբեռնման խոշոր նավամատնգիստ, բեռնման 15 նավամատույցներով։ Նավամատնգստի ընդունման տարողությունն է ամսական 150 նավթատար նավ։ Նավթատար նավատորմը պատկանում է «Բրիտիշ Տանկեր Կոմպանի»-ին, որը հանդիսանում է «Անգլո-Իրանիան Կոմպանի»-ի դուստր ընկերություն։ 1951 թ. այդ ընկերության նավթատար նավերի թիվն էր 155, 1,95 միլիոն տոննա տարողությամբ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական տարիներին, երբ բրիտանական առևտրական և նավթատար նավատորմը խոշոր վնասներ կրեց, և երբ Միջերկրական ծովը դաշնակից նավերի համար արգելված զոնա դարձավ, Իրանի նավթի արտադրությունը որոշ չափով նվազեց։ Տարեկան արտադրանքը ընկավ 6.6 միլիոն տոննայի։ Պատերազմի վերջին տարիներին Միջերկրականի ճանապարհի վերաբացման զուգընթաց, Իրանի նավթի արտադրությունը ունեցավ մեծ վերելք, զգալի չափով գերազանցելով նախապատերազմյան շրջանի արտադրության մակարդակը։ Պատերազմից հետո նույնպես Իրանի նավթի արտադրությունը շարունակեց բարձրանալ։

Իրանը 1911 թվականից մինչև 1951 թ. նավթահանել է ընդամենը 342 միլիոն տոննա անմշակ նավթ։ Դրա մեծ մասը՝ մոտ 45 տոկոսը ստացվել է Մասջիդ ի-Սուլեյման նավթավայրից։ Այժմ ամենակարևոր կենտրոնը հանդիսանում է Ագա-Ջարիի նավթավայրը։ 1939 թ. Իրանում նավթահանված 9,6 միլիոն տոննայի դիմաց 1945 թ. հանված է 17 միլիոն տոննա, 1946 թ. 19 միլիոն տոննա, 1947 թ. 29,5 միլիոն տոննա, 1948 թ. 24,8 միլիոն տոննա, 1949 թ. 26,8 միլիոն, 1950 թ. 31,8 միլիոն, 1951 թ. 16,8 միլիոն (այդ տարին նավթահանումը դադարեցվեց օդոստոս ամսից), վերջապես 1952 թ. նավթահանել է մեկ միլիոն տոննա, ներքին կարիքների համար[1]։

Վերջին տվյալների համաձայն Իրանի նավթային պաշարները հաշվվում է 8250—1250 միլիոն տոննա։ Իրանի գրեթե բոլոր նավթավայրերը կապված են Աբադանի նավթամշակման սիստեմի հետ նավթամուղային ցանցով, որն ունի 2300 կիլոմետր ընդհանուր երկարություն։

Նավթային հարստությունների պետականացման օրենքով նախկին

[1] Новое Время, № 26, 24 июня, 1953, стр. 6.

անգլո-իրանական ընկերության պատկանող նավթավայրերը, ինչպես նաև նավթամշակման և նավթամուղային սարքավորումները 1951 թ. սեպտեմբեր ամսին գրավվեցին իրանական կառավարության կողմից։

Իրաք.—Նախքան անգլիական մանդատ և ապա «անկախ» պետություն դառնալը, Իրաքը կազմում էր օսմանյան կայսրության հետամնաց գավառներից մեկը։ Նավթային խոշոր մոնոպոլիստներին հայտնի էր, որ Մուսուլից ոչ շատ հեռու, գոյություն ունեն նավթային խոշոր հարստություններ։ Այդ շրջանում կոնցեսիաներ ձեռք բերելու համար մոնոպոլիստները ուժեղ պայքար էին մղում միմյանց դեմ։ «Իրաք Պետրոլյում Կոմպանի»-ն այդ բազմաթիվ շահերի բախման և պայքարի արդյունքն է։ Մինչև այդ ընկերության կազմվելը, եղել են մի շարք այլ ընկերություններ, որոնք փորձել են այս շրջանում նավթային կոնցեսիաներ ձեռք բերել։

1927 թ. հոկտեմբերի 13-ին առաջ նավթ հայտնաբերվեց Մուսուլից ոչ շատ հեռու, հարավում 260 մետր խորության՝ Կայարահի № 1 հորում։ Երկու օրից հետո Բաբա Գարգուրում հայտնաբերվեց մի ուրիշ հոր, օրական 10—12 հազար տոննա արտադրողականությամբ։ Այս բոլոր հայտնաբերումների հետևանքով պայքարը նավթային խոշոր մոնոպոլիստների միջև ընդունեց սուր բնույթ, մինչև որ 1929 թ. նրանք համաձայնության գալով կազմակերպեցին «Իրաք Պետրոլյում Կոմպանի»-ն։

Բաբա Գարգուրի և մի շարք այլ հորերի հայտնաբերումով, Կիրկուկի նավթավայրը դարձավ համաշխարհային մասշտաբի հարուստ մի նավթային շրջան, որն սկիզբ է առնում Բաղդադի հյուսիսից և տարածվում է դեպի հյուսիս-արևմուտք։ 1932 թ. այս նավթավայրում հորատվել են 26 նոր հորեր, որոնք բավարար հիմք են հանդիսացել Իրաքից Միջերկրականի ծովափը ձգվող նավթամուղի կառուցման համար։ Այս նավթամուղը բաղկացած է զուգահեռորեն ընթացող երկու խողովակային գծից, որը 241 կիլոմետրից հետո Հադիթայում ճյուղավորվում է։ Գծերից մեկը ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք՝ Տրիպոլի, 610 կիլոմետր երկարությամբ, իսկ մյուսը դեպի հարավ-արևմուտք՝ Հայֆա, 749 կիլոմետր երկարությամբ։ Երկու գծերի ընդհանուր երկարությունը հասնում է 1841 կիլոմետրի։

Սակայն այս նավթամուղի տարողությունը չէր համապատասխանում Իրաքի նավթավայրերի արտադրողականության խոշոր պոտենցիալին։ Դրա համար 1946 թ. մոնոպոլիստները ձեռնարկեցին նոր նավթամուղի կառուցմանը խողովակների ավելի խոշոր տրամագծով։ Կիրկուկից Բանիաս (Լիբանանում, Միջերկրականի ափին) ձգվող նոր նավթամուղի կառուցումը ավարտվեց 1952 թ. նոյեմբերին։ Այս գծի փոխադրման տարողությունն է տարեկան 14 միլիոն տոննա, երկարությունն է՝ 888 կիլոմետր։

Իրաքի նավթի մեծագույն մասը ստացվում է Կիրկուկի նավթավայրերից։ Վերջին տվյալների համաձայն, միայն այս շրջանի նավթի պաշարները հաշվվում են 700 միլիոն տոննա։

Տիգրիսի արևմուտքում նավթ է հայտնաբերվել հետևյալ չորս վայրերում՝ Կայյարալ, Կասար, Ժաուան և Նաժմահ։ Այս շրջանի նավթավայրերը դեռևս շահագործման չեն հանձնված։ Այն—Զահլաում (Մուսուլից 60 կիլոմետր հյուսիս արևմուտքում) 1940 թ. նույնպես հայտնաբերվեց նավթ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում Իրաքի նավթի արտադրությունը ժամանակավորապես սահմանափակվեց։ Սակայն, պատե-

բազմի վերջին տարիներին նավթահանումը վերականգնվեց և կատարվեցին նոր հորատումներ։

1952 թվականին Բասրայի շրջանը արտադրել է 2,24 միլիոն տոննա, Կիրկուկը՝ 15,5 միլիոն տոննա նավթ։ Այս վերջին նավթավայրից 1934 թվականից մինչև 1952 թ. ստացվել է ընդամենը 93,53 միլիոն տոննա նավթ։ Իրաքի նավթի արտադրությունը ըստ ռայոնների ներկայացնում է հետևյալ պատկերը.

Նավթավայր	Արտադրություն հազար տոննաներով		
	1950 թ.	1951 թ.	1952 թ.
Կիրկուկ	6302	8945	15552,72
Զուբայր	—	135,97	2238,18
Այն Զալեհ[1]	—	—	—
Նահր Ումր[2]	—	—	—
Նավթ խանեհ[3]	205,5	3	492,5
Ընդամենը	650,7	9080,97[4]	18553,31[5]

1952 թվականին նոր նավթամուղի ավարտման շնորհիվ այս երկրի նավթահանումը աննախընթաց չափով բարձրացել է։ Նույն թվականին արտադրությունը հասել է 18,5 միլիոն տոննայի։ 1953 թ. համար նախատեսված էր նավթի արտադրությունը հասցնել 25 միլիոն տոննայի։

Իրաքի նավթաթոր գործարանները, թվով 3, մշակում են տարեկան մոտ մեկ միլիոն տոննա։

Հայֆայում 1938 թվականին Իրաքի նավթի համար կառուցվեց նավթամշակման գործարան։ 1946 թ. այդ գործարանը արդեն ի վիճակի էր տարեկան 4 միլիոն տոննա նավթ մշակել։

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Տրիպոլի հասնող նավթը փոխադրվում էր Եվրոպա անմշակ վիճակում, որտեղ ենթարկվում էր թորման։ Տեղական կարիքների համար օգտագործվող նավթն էլ Եվրոպա արտահանվելուց, մշակվելուց հետո վերադարձվում էր Սիրիա և Իրաք ու վաճառվում թանկ գնով։ Պատերազմի տարիներին, այս երկրներում գործող օտարերկրյա նավթային մոնոպոլիստները համաձայնեցին կառուցել նավթամշակման երկու փոքր գործարան, մեկը Տրիպոլիում, մյուսը Կիրկուկում։

Իրանի նավթարդյունաբերության պետականացումից հետո, «Անգլո-Իրանիան Օյլ Կոմպանի»-ի շահագործման նոր հենարանները պատնում են Իրաքը և Կվեյտը։

---

[1] և [2] Արտադրությունը ժամանակավորապես դադարեցված։

[3] 1951 թ. հանքահանումը եղել է չնչին։

[4] Ուրիշ տվյալների համաձայն եղել է 8,7 միլիոն տոննա։

[5] Ուրիշ տվյալների համաձայն 19 միլիոն տոննա (տես Новое время, № 26, 24 июня, 1953, стр. 6).

Բահրեյն.—Բահրեյնը փոքր կղզիների խումբ է, որը գտնվում է Արաբական թերակղզու արևելյան ծովափից քիչ հեռու՝ Պարսից ծոցում և 1880 թվականից եղել է անգլիական պրոտեկտորատի տակ։

Բահրեյնի առաջին հորը՝ Ջեբել Դուխան № 1-ը շահագործման հանձնվեց 1932 թ. հունիսին՝ օրական 110—140 տոննա արտադրողականությամբ։

1952 թ. Բահրեյնում հանվել է ավելի քան 1,5 միլիոն տոննա նավթ, նավթամշակումը կատարվում է տեղում։ 1936 թ. այնտեղ կառուցվել է նավթաթոր գործարան, որն ի վիճակի է մշակել բացի տեղական նավթից, նաև Արաբիայի մայր ցամաքում հանված նավթի որոշ մասը։ Այս գործարանը, որի մշակման կարողությունն է տարեկան 9—10 միլիոն տոննա, նավթամուղի միջոցով կապված է Արաբական մայր ցամաքի նավթավայրերի հետ։ Այս նավթամուղի մի մասը, մոտ 25 կիլոմետր, անցնում է ջրի միջով։

Շահագործման առաջին օրից հաշված մինչև 1952 թ. Բահրեյնում հանվել է ավելի քան 20 միլիոն տոննա անմշակ նավթ։

«Բահրեյն Պետրոլյում Կոմպանիա»-ի կոնցեսիաները տարածվում էին 100 հազար ակրի վրա։ 1939 թվականին կոնցեսիաները լայնացվեցին ընդգրկելով երկրի ողջ տերիտորիան։

Սաուդական Արաբիա.—Բահրեյն կղզու նավթային պաշարների հայտնաբերումից հետո, նավթային խոշոր մոնոպոլիստների ուշադրությունը բևեռվեց դեպի արաբական մայր ցամաքը, որովհետև երկրաբանների ուսումնասիրությունը ցույց էր տվել, որ Բահրեյնի նավթի պաշարները երակներով կապված են արաբական թերակղզու հետ։

«Ստանդարտ Օյլ օֆ Կալիֆորնիա»-ն բանակցության մեջ է մտնում Իբն Սաուդի հետ և հաջողվում է ձեռք բերել կոնցեսիոն իրավունքներ, որոնք տարածվում էին Սաուդական Արաբիայի արևելյան ծովափնյա ողջ շրջանի վրա։ 1939 թվականին նոր կոնցեսիոն իրավունքներն ընդգրկեցին նաև Նեջդի սարահարթության հյուսիս-արևելք ձգվող տարածությունները։ 1944 թ. հունվար ամսին «Կալիֆորնիա Արաբիան Ստանդարդ Օյլ Կոմպանիա»-ն և «Տեկսաս Օյլ Կոմպանիա»-ին միանալով, կազմում են «Արաբիան Ամերիկըն Օյլ Կոմպանիա»-ն։ 1946 թ. այդ ընկերության բաժնեկից են դառնում «Ստանդարդ Օյլ օֆ Նյու Ջերզեյ»-ն և «Սոկոնի-Վակում Օյլ Կոմպանիա»-ն։ Սակայն արաբական թերակղզին գտնվում էր «Կարմիր գծի»[1] պայմանագրով սահմանված տերիտորիայի մեջ։ Դրա համար էլ, այս պայմանագրի մասնակից մյուս մոնոպոլիստները բողոքում և պայքար են մղվում Արաբիայում, ամերիկյան նավթային մոնոպոլիստների գործունեությունների դեմ։ Պայքարում վերջի-վերջո հաղթանակում են ամերիկյան մոնոպոլիստները, որոնք անարգել շարունակում են արաբական նավթի գիշատիչ շահագործումը։

---

[1] Կարտելային պայմանագիր, ստորագրված Իրաքի նավթային ընկերության մաս կազմող չորս մոնոպոլիստական խմբավորումների միջև։ Այդ պայմանագրի համաձայն, յուրաքանչյուր պայմանագրվող կողմ պարտավոր է կարմիր գծով սահմանված տարածություններում ոչ հետազոտություններ կատարել և ոչ էլ կոնցեսիաներ ձեռք բերել։ Կարմիր գծով սահմանված տարածությունների մեջ են մտնում Մերձավոր Արևելքի տերիտորիայի մեծագույն մասը, այդ թվում Սաուդական Արաբիան։

Սաուդական Արաբիայում հորատման գործողությունները սկսվեցին 1933 թվականին։ Առաջին հորատումները սպասված արդյունքները չտվեցին։ Հետագայում, 1936 թ. Դամամի շրջանում 1567 մետր խորությամբ մեծ քանակությամբ նավթ հայտնաբերվեց և իսկույն ևեթ շահագործման հանձնվեց։ Վերջին շրջանում հորերի թիվը հասել է 33-ի։ Դամամի նավթավայրը մինչև Արկայիկի նավթավայրի հայտնաբերվելը, հանդիսացավ Սաուդական Արաբիայի նավթավայրերից ամենաարտադրողունակը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայտնաբերվեցին և շահագործման հանձնվեցին չորս նոր նավթավայրեր. դրանք են՝ Արու Նադրիա (1940 թ. մարտ), Արկայիկ (1941 թ. փետրվար), Կատիֆ (1945 թ. փետրվար) և Բուկա (1947 թ. մայիս)։ Այդ բոլոր նավթավայրերը գտնվում են Դամամի նավթավայրից ոչ շատ հեռու, բացառությամբ Արու Նադրիան, որը գտնվում է 150 կիլոմետր հյուսիս-արևմուտք։ Այժմ Սաուդական Արաբիայի նավթավայրերի սիստեմում Արկայիկը գրավում է առաջին տեղը։ Այս շրջանի պաշարները առանձին վերցրած հասնում են մոտ 400 միլիոն տոննայի, երկրի ընդհանուր պաշարների 550—700 միլիոն տոննայի դիմաց։ Ավելի նոր տվյալների համաձայն Սաուդական Արաբիայի նավթի պաշարները հաշվվում են 950 միլիոն տոննայի։

1947—1948 թվականներին Դամամի նավթավայրը իր 33 հորերից տալիս էր օրական 12 հազար տոննա նավթ, Արկայիկի նավթավայրը՝ 26 հորերից տալիս էր օրական 30 հազար տոննա, Կատիֆի նավթավայրը՝ 2 հորերից 755 տոննա։

1952 թվականին Սաուդական Արաբիայի նավթահանման մասշտաբները անհամեմատ բարձրացել են։ Արկայիկում՝ 62 հորերից ստացվում է օրական միջին հաշվով 70 հազար տոննա նավթ, Դամամում գործող 30 հորերից՝ 9 հազար տոննա։ Այնուհետև հայտնաբերվել են հետևյալ նոր նավթավայրերը, որոնք 1951 թ. դեռ շահագործման չէին հանձնվել—Դհավար, Այն—Դարի ոայոնում, Հարադհը, Արու Հադրիյահ, Ֆադհիլի, Ուսմանյահ և վերջապես Սաֆանիյահ. Այս վերջինը հանդիսանում է առաջին ընդծովյա հորը Պարսից ծոցում, որը գտնվում է ափից 3 կիլոմետր հեռավորության վրա, Ռաս-էլ-Միշաարից մոտավորապես 18 կիլոմետր հարավարևելք։ Դհավարը 1952 թ. շահագործման մեջ էր գտնվում և տալիս էր 37 հորերից՝ օրական միջին հաշվով 40 հազար տոննա նավթ։ Նույն տարին երկրի նավթի ընդհանուր արտադրությունը եղել է 41,5 միլիոն տոննա։ Շահագործման առաջին օրից (1936 թ.) մինչև 1952 թ. վերջը, Սաուդական Արաբիայի նավթավայրերը միասին վերցրած արտադրել են ընդամենը 175 միլիոն տոննա նավթ։

Այս ընդհանուր նավթահանումից օրական մոտ 40 հազար տոննան փոխադրվում է նավթամուղի միջոցով Ռաս Տանուրայի և Բահրեյնի նավթաթորման գործարանները, մնացածը անմշակ վիճակում փոխադրվում է Եվրոպա։

Ռաս Տանուրայի նավթաթորման գործարանի կառուցումը սկսել են 1944 թ. սեպտեմբերին և շահագործման է հանձնվել 1945 թ. հոկտեմբերին։ Գործարանի կարողությունն է տարեկան 9—10 միլիոն տոննա։ Այստեղ թորվում են նավթի զանազան ֆրակցիաներ, հատկապես 70 և 72 օկտանի բենզին, կերոսին, դիզելի վառելանյութ, մազութ և այլն։

Սաուդական Արաբիայի նավթահանման դինամիկան
(տոննաներով)

Տարիներ	Օրական միջին արտադրությունը	Տարեկան արտադրություններ
1936	13,5	2740
1937	27	8905
1938	139	65815
1939	1458	538938
1940	1984,5	735005
1941	2171,5	804927
1942	1674	620610
1943	2025	750675
1944	2875,5	1,133,778
1945	7884	2,919,607
1946	21961	8,212,[illegible]28
1947	33345	12,204,423
1948	53350	19,570,861
1949	64350	24,439,233
1950	73804,5	27,338,210
1951	104334	38,112,290
1952	114800	41,354,941
1953 (առաջին վեց ամիսը)	120000	21,160,000

Մերձավոր Արևելքի նավթի փոխադրման ծախսերը կրճատելու և Սուեզի ջրանցքի տուրքերից ազատվելու համար նավթի մոնոպոլիստները կառուցել են հսկա նավթամուղային սիստեմ, որը ի միջի այլոց Արաբիայի նավթավայրերը կապում է Միջերկրականի նավահանգիստների հետ։ Արաբական նավթամուղի երկարությունն է մոտ 1650 կիլոմետր, խողովակների տրամագիծը՝ 750—760 միլիմետր, փոխադրման տարողությունը տարեկան 15 միլիոն տոննա նավթ։ Նավթամուղը շահագործվում է ամերիկյան «Տրանս-Արաբյան Պայպ Լայն Կոմպանիա»-ն ընկերության կողմից։

Ամենավերջին տվյալների համաձայն Սաուդական Արաբիայի նավթամուղի սիստեմը և արտահանման կետերը (նավահանգիստները) ներկայացնում են հետևյալ պատկերը.

Տրանս—Արաբիան նավթամուղ (Տապլայն).— Այս նավթամուղը կայսումահը (Ռաքի-էլ-Բատնի ոայոնում) կապում է Սայդոնի հետ՝ Լիբանանում։ Երկարությունն է մոտ 1650 կիլոմետր։ Համարվում է Արաբիայի գլխավոր գիծը։

Արաբիան—Ամերիկը Q—Q գիծը.— Այս նավթամուղն ունի 432 կիլոմետր երկարություն, օժանդակ գիծ է, որը կատիֆը միացնում է կայսումահի գլխավոր գծի հետ։

Դամամի նավթավայրի նավթամուղի սիստեմը.— ա) Արաբիան— Բահրեյն նավթամուղը — 38 կիլոմետր երկարությամբ։ Դամամը կապում է Ռաս Տանուրայի նավթաքոր գործարանի հետ։ բ) Դամամ— Ռաս Տանուրա № 2 նավթամուղը, 37 կիլոմետր երկարությամբ։ Նույնպես Դամամը կապում է Ռաս Տանուրայի գործարանի հետ։

Արկայիկի նավթավայրի նավթամուղային սիստեմը.— ա) Արկայիկ—Դամամ № 1 օժանդակ գիծը, 67 կմ. երկարությամբ։ բ) Արկայիկ—Դամամ № 2, 64 կմ. երկարությամբ։ գ) Կատիֆ—Արկայիկ, 72 կմ. երկարությամբ։

Կատիֆի նավթավայրի նավթամուղային սիստեմը.—Բաղկացած է երեք օժանդակ գծերից. ա) Կատիֆը միացնում է Դամամ—Ռաս Տանուրա գծի հետ։ բ) Կատիֆը միացնում է Կայսումահի հետ։ գ) Կատիֆը միացնում է ուղղակի Ռաս Տանուրայի հետ։

Այն—Դարի նավթավայրի նավթամուղային սիստեմը.—Նոր է ավարտվել։

Այն—Դարը Արկայիկին միացնող օժանդակ նավթամուղ է՝ 46 կմ. երկարությամբ։

Նավահանգստային հարմարանքներ.—1952 թվականին Սաուդական Արաբիայի նավթը արտահանվում էր հետևյալ գլխավոր երեք կետերից. ա) Սայդոն, Լիբանանում, «Տապյանի» վերջին կայանը Միջերկրական ծովի ափին։ բ) Սիդրահ կղզին, Բահրեյնի բեռնման կայանը։ գ) Ռաս Տանուրա, արաբական մայր ցամաքում Պարսից ծոցի ափին, որտեղ գործում են բեռնման երկու կայաններ։

Կվեյտ.—Կվեյտը արաբական փոքր իշխանություն է, որը գտնվում է արաբական մայր ցամաքի հյուսիս-արևելքում, Պարսից ծոցի ափին։ 1899 թվականից այս երկիրը գտնվում է անգլիական իմպերիալիզմի լծի տակ որպես պրոտեկտորատ։ Երկրի գլխավոր քաղաքն է Էլ-Կվեյտը, որը միևնույն ժամանակ միակ նավահանգիստն է։ Այդտեղ է ապրում նստակյաց բնակչության մեծագույն մասը։ Երկրի ժողովուրդը չափազանց հետամնաց և աղքատ է, սակայն նավթային պաշարների տեսակետից (1250 միլիոն տոննա) այս երկիրը Մերձավոր Արևելքում գրավում է առաջին տեղը։ Համեմատության համար հետևյալ աղյուսակում բերվում են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթի պաշարները։

Պաշարները միլիոն տոննաներով

	Իրան	Իրաք	Կվեյտ	Սաուդական Արաբիա	Ընդամենը
Ըստ Դեն Գոյլերի (1945 թ.)	900	700	1250	700	3550
Ըստ Պետրոլյում Դետա Բուկի (1948 թ.)	950	700	1250	900	3800
Ըստ Օյլ էնտ Գաս Ջուրնալի (1947 թ.)	1300	1025	700	825	3850
Ըստ «Արաբիան Ամերիկեն Օյլ Կոմպանի»-ի				950	4500
Ըստ «Ուորլդ Օյլ»-ի (1951 թ. փետր. համարում)					6586

Կվեյտում նավթը առաջին անգամ հայտնաբերվեց 1938 թվականին Բուրգան կոչվող վայրում. 1950 թ. տվյալների համաձայն՝ այդ տարվա նավթահանումը եղել է 17 միլիոն տոննա, 1951 թ.՝ 28 միլիոն տոննա, 1952 թ.՝ 38 միլիոն տոննա։ 1938 թվականից մինչև 1952 թվականը Կվեյտից ստացվել է 105 միլիոն տոննա նավթ։

1951 թ. օգոստոսի 23-ին Բուրգան նավթավայրից 13 կմ. հյուսիս հայտնաբերվեց Մագվա № 1 նավթավայրը։ Նույն տարվա ընթացքում Կվեյտի ողջ տերիտորիայում 19 նոր հորատումներ կատարվեցին, հորերի ընդհանուր թիվը հասավ 118-ի, որոնցից և ոչ մեկը ամուլ դուրս չեկավ։ 1952 թ. դեկտեմբերին Բուրգանից 7 կմ. հյուսիս-արևելք հայտնաբերվեց Ահմադի № 1 նավթավայրը։ Կվեյտի նավթի փոխադրումները կատարվում են Պարսից ծոցից՝ նավթատար նավերով։ Սակայն, ծրագրված է կառուցել հատուկ նավթամուղ, որը կապելու է Կվեյտի նավթավայրերը Միջերկրական ծովի ափի հետ։

Եթե հանրագումարի բերենք Կվեյտի նավթարդյունաբերության մասին վերջին տվյալները, կստացվի հետևյալ պատկերը.

	1947 թ.	1948 թ.	1949 թ.	1950 թ.	1951 թ.	1952 թ.
Հորատումների թիվը	13	36	86	99	118	131
Շահագործվող հորերը . . .	13	36	86	99	118	131
Օրական միջին հանումը (տոննաներով)	6096	17399	33702	47128	76994	108750
Տարեկան հանում (միլիոն տոննաներով)	2,22	6,39	12,32	17,22	28,1	37,6
Ընդամենը հանված է (միլիոն տոննաներով)	3,04	9,43	21,75	38,97	67,07	105

Կվեյտում գործում է նավթախոր մի գործարան, որի տարեկան կարողությունն է մոտ 1,5 միլիոն տոննա։

Կվեյտի չեզոք գոտի — 1951 և 1952 թվականների ընթացքում էքսպերիմենտալ հորատումներ են կատարվել այստեղ, բայց մինչև այժմ ոչ մի հոր դեռևս շահագործման չի հանձնված։ Առհասարակ այս շրջանի մասին մանրամասնություններ չկան։

Կատտար. — Այս երկիրը նույնպես արաբական փոքր իշխանություն է, գտնվում է նույնանուն թերակղզում՝ արաբական մայր ցամաքի արևելքում՝ Պարսից ծոցում, և հանդիսանում է անգլիական պրոտեկտորատ։ Գլխավոր քաղաքն է Էլ-Բիդան։

Կատտարի նավթավայրերը կապվում են 90 կիլոմետր երկարությամբ նավթամուղային սիստեմով Պարսից ծոցի ափին գտնվող Ումմ Սայիդ նավահանգստի հետ։ Նավթամուղի փոխադրման օրական միջին տարողությունն է 6—7 հազար տոննա։ 1952 թ. Կատտարում նավթահանվել է ավելի քան 3,2 միլիոն տոննա։

Եգիպտոս. — Այս երկրի նավթավայրերը գտնվում են Կարմիր ծովի արևմտյան ափին, Սուեզ քաղաքից մոտ 190 կիլոմետր հարավ։ Երկու ամենագլխավոր նավթավայրերն են Ռաս Ղարիբը և Հուրղադան, որոնք միասին օրական արտադրում են 2740 տոննա նավթ։ Վերջին երեք տարիների նավթարտադրությունը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Նավթավայր	Հայտնաբ. թիվը	Պատկանելիությունը	Հազար տոննաներով		
			1950 թ.	1951 թ.	1952 թ.
Դեմոա . . .	1908	Անգլո-Իջիպշեն Օյլ Ֆիլդ . .	—	—	—
Հուրղադա . .	1913	Նույնը	36,35	41,25	38,17
Աբու Դարբա	1918	Բանկ Միսր	Տվյալներ չկան		
Ռաս Ղարիբ		Անգլո-Իջիպշեն Օյլ Ֆիլդ . .	1088,40	1099,62	1146,14
Սուդր . . .		Նույնը և Սոկոնի-Վակուում .	5822,0	5105,31	3206,65
Ասլ		Նույնները	5266,0	5816,0	7474,24

Եգիպտոսում գործում է երկու նավթաթոր գործարան, որոնց միացյալ կարողությունն է տարեկան մոտ 2,5 միլիոն տոննա։

Իսրայել.—Մերձավոր Արևելքի նավթարդյունաբերող երկրների շարքում Պաղեստինը մեծ նշանակություն ունի, չնայած այն բանին, որ այդ երկիրը նավթ չի արտադրում։ Մինչև արաբա-իսրայելական պատերազմը, այս երկիրը հանդիսանում էր Միջերկրական ծովի ափին նավթի արտահանման կարևոր կայաններից մեկը, որտեղ գործում էր նաև նավթաթոր խոշոր գործարան։ Պաղեստինի նավթաթորման գործարանը, որը կառուցվել է հատկապես Իրաքի նավթի մշակման համար, վերջին իրադարձությունների հետևանքով այժմ աշխատում է իր տարողությունից շատ ավելի ցածր մասշտաբներով, Ամերիկայից ներմուծված անմշակ նավթի վրա՝ տեղական սպառումների համար։

Սիրիա և Լիբանան.—1948 թվականին կատարված հետազոտություններից հետո, հայտնի դարձավ, որ Սիրիայի ընդերքը չափազանց հարուստ է նավթային պաշարներով։ Սիրիայի տերիտորիայում հետազոտման իրավունքը պատկանում է «Սիրիա Պետրոլյում Կոմպանիա»-ին, որը «Իրաք Պետրոլյում»-ի օժանդակ ընկերություններից մեկն է, և որտեղ գերիշխում է անգլիական կապիտալը։ Այս ընկերության հետազոտման իրավունքները տարածվում են Դամասկոս-Բաղդադ ճանապարհի հյուսիսում գտնվող շրջանների վրա։ 1949 թվականին ամերիկյան կապիտալի ներկայացուցիչներին հաջողվեց երկրի մնացած տերիտորիայի համար կոնցեսիաներ ձեռք բերել։ Շուտով անգլիական և ամերիկյան նավթային մոնոպոլիստների միջև պայքարը սաստկացավ։

Լիբանանը Պաղեստինի նման գտնվելով Առաջավոր Ասիայի Միջերկրական ծովի ափին, ունի Մերձավոր Արևելքի նավթի արտահանման համար չափազանց նպաստավոր պայմաններ։ Այսպես, օրինակ, նա ունի մի քանի կարևոր նավահանգիստներ, որոնցից ամենագլխավորը Բեյրութն է, երկրորդը՝ Տրիպոլին, որը միաժամանակ հանդիսանում է Իրաքի նավթամուղի հյուսիս-արևմտյան ճյուղի վերջին կայանը։ Ծրագիրների համաձայն նոր կառուցվող բոլոր մագիստրալ նավթամուղերը ուղղվելու են դեպի Լիբանանի նավահանգիստները։ Եթե այդ ծրագիրները իրագործվեն, Բեյրութը, Տրիպոլին, Սայդոնը և Բանիասը կդառնան նավթի արտահանման ավելի կարևոր կենտրոններ, քան Հայֆան՝ Պաղեստինում։ Եվ այդ ժամանակ, ըստ նախնական տվյալների, արդեն Մերձավոր Արևելքում արտադրված նավթի 80 տոկոսը կարտահանվի Լիբանանի նավահանգիստների միջոցով։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Մերձավոր և Միջին Արևելքի գրեթե բոլոր երկրները նավթի խոշոր արտադրողներ են, իսկ այն մի քանի երկրները, որոնք դեռևս նավթի պաշարներով համարվում են համեմատաբար աղքատ, կարևոր են որպես արտահանման և թորման կենտրոններ։

Հանրագումարի բերելով Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունաբերության մասին մեր նշածները, ստանում ենք հետևյալ պատկերը.

Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունաբերությունը
(հազար տոննաներով)[1]

Երկրներ	Նավթավայրեր	1949 թ.	1950 թ.	1951 թ.	1952 թ.	1953 թ. առաջին կիսամյակը
Իրաք	Կիրկուկ	4000,0	6302,0	8274,8	15552,7	
	Զուբայր	—	—	126,0	2238,2	
	Նաֆտ Խանեհ	321,3	105,5	0,14	492,5	
	Այն Զալահ	—	—	—	269,9	
	Ընդամենը	4321,3	6407,5	8401,24	18553,3	13728,0
Կատար	Դուխան	—	1657,7	2383,8	3200,0	2075,0
Սաուդական Արաբիա	Աբկայիկ	18916,96	22135,91	25212,11	21150,0	
	Դամամ	4297,14	4621,15	4256,24	3190,0	
	Կատիֆ	625,0	581,15	945,55	1775,0	
	Այն Գաբ (Գհավար)	—	—	7698,39	15245,0	
	Ընդամենը	23839,10	27338,21	38112,29	41360,0	21160,0
Բահրայն	Բահրայն	1504,95	1509,19	1493,3	1500,0	740,0
Կվեյտ	Բուրգան	12320,41	16949,92	28102,54	37600,0	21245,0
Իրան	Մասջիդ-ի-Սուլեյման	2891,39	2975,64	1388,77		
	Լալի	413,74	761,31	436,76		
	Հաֆտ-Կել	9956,20	9636,72	4328,65		
	Նաֆտ-Սաֆիդ	1073,81	1253,83	537,86		
	Աղա-Ժարի	11551,16	16100,83	8706,35		
	Գաչ Սարան	2001,16	2109,53	1316,98		
	Նաֆտ-ի-Շահ	158,78	174,68	128,51		
	Ընդամենը	28046,24	33021,54	16843,86	1000,0	615,5

Մերձավոր և Միջին Արևելքի նավթաթոր գործարանները[2]

Երկրներ	Գործարանների թիվը	Տարեկան թորման կարողությունը
Իրաք	3	0,9 միլիոն տոննա
Սաուդական Արաբիա	1	9,5 » »
Բահրայն	1	9,0 » »
Կվեյտ	1	1,5 » »
Իրան	3	30,0 » »
Լիբանան	1	0,5 » »
Իսրայել	1	4,0 » »
Եգիպտոս	2	2,5 » »

Մերձավոր Արևելքում գործող կոնցեսիաները

Իրան.—*1901 թ. Վիլիամ Նոքս Դ'Արսին Պարսկաստանի Շահից ստանում է երկրի նավթային հարստությունները շահագործելու համար կոնցեսիա։ Կոնցեսիան ընդգրկում էր 800 հազար քառակուսի կիլոմետր տա-*

[1] *Աղբյուրներ.*—Bulletin of the American Association of Petroleum geologists, July 1950, July 1951, July 1952, and July 1953 u world Petroleum, luly 1953.

[2] World Petroleum July, 15, 1953.

բածություն, փաստորեն երկրի ընդհանուր տերիտորիայի (1642 հազար քառ. կմ.) 50 տոկոսը, դուրս թողնելով միայն հյուսիսային հինգ պրովինցիաները։ Ոմանց կարծիքով կոնցեսիան Դ'Արսիին արժել է 10 հազար ֆունտ ստերլինգ, ըստ ուրիշների՝ 40 հազար ֆունտ ստերլինգ միանվագ գումար և ընկերության զուտ շահերի 16 տոկոսը։ 1909 թվականին Դ'Արսիի հիմնադրած ընկերությունները «Ֆերստ Էքսպլորեյշընն Կոմպանիա»-ն և «Բախտիարի Օյլ Կոմպանիա»-ն, Բիրմանիայում գործող «Բիրմա Օյլ Կոմպանիա»-ի հետ միասին, կազմակերպում են «Անգլո-Պերժընն Օյլ Կոմպանիա»։ Հետագայում, երբ Պարսկաստանը վերականգնում է իր հին պատմական անունը՝ Իրանը, այս ընկերության անունը դառնում է «Անգլո-Իրանիան Օյլ Կոմպանիա»։

1932 թվականին ժողովրդական մասսաների ճնշման տակ, Ռիզա Շահի կառավարությունը չեղյալ է հայտարարում «Անգլո-Պերժընն»-ի կոնցեսիան։ Անգլիական կառավարությունը այս հարցը հասցնում է Ազգերի Լիգա։ Ազգերի Լիգան, որը գտնվում էր փաստորեն անգլիական ազդեցության տակ, ճնշում է բանեցնում իրանական կառավարության վրա և ստիպում է ընդունել անգլիական առաջարկները։ Երկար դիմադրությունից հետո, Պարսից ծոց փոխադրված անգլիական ռազմանավերի թնդանոթների սպառնալիքի առաջ՝ Ռիզա Շահի կառավարությունը տեղի է տալիս։ 1933 թվականին նոր պայմանագիր է ստորագրվում Պարսկաստանի համար ձեռակոնորեն մի քիչ ավելի նպաստավոր պայմաններով։ Նոր պայմանագրով նախ «Անգլո-Պերժընն»-ը համաձայնվում էր արտադրված նավթի յուրաքանչյուր տոննայի համար, որպես հոնորար պարսկական կառավարությանը վճարել 4 շիլինգ։ Երկրորդ՝ համաձայնվում էր շահարաժինը 16 տոկոսից բարձրացնել 20 տոկոսի, այն դեպքում, երբ զուտ շահերի ընդհանուր գումարը անցնելու էր 671.250 ֆունտ ստերլինգը։ «Անգլո-Պերժընն»-ի կողմից կատարված այս բոլոր «զիջումները» միասին վերցրած Իրանի պետությանը տալիս էին յուրաքանչյուր բարել նավթին 20,6 սենտ, որը հանդիսանում է Մերձավոր Արևելքի մյուս կոնցեսիոն վարձքերի հետ համեմատած ամենացածր վարձքը։

«Անգլո-Պերժընն»-ի մի ուրիշ «զիջումն» էլ այն եղավ, որ կոնցեսիոն տարածությունները սահմանափակվեցին 160 հազար քառակուսի կիլոմետրով։ Սա ձևական «զիջում» էր, այն պարզ պատճառով, որ արդեն մինչև այդ ընկերության շահագործման ոլորտը այդ սահմանների մյուս կողմը չէր անցել։ Մինչդեռ այս բոլոր ձևական «զիջումների» փոխարեն «Անգլո-Պերժընն»-ը ապահովեց ժամկետի երկարաձգում 60 տարով, մինչև 1993 թվականը։ Այսպիսով, այս կոնցեսիայի պայմանների վերանայումը փաստորեն հանդիսացավ անգլիական կողմի հաղթանակը և ոչ թե իրանական կառավարության, որը հանդիսանում էր այդ վերանայման առաջարկի հեղինակը։

1937 թվականին ամերիկյան «Ամիրանիան Օյլ Կոմպանիա»-ին հաջողվում է Իրանի Հյուսիս-արևելյան շրջաններում ապահովել կոնցեսիաներ։ Հետագայում այս ընկերությունը չկարողանալով «Անգլո-Իրանիան»-ի հարվածներին դիմադրել, իր գործունեությունը դադարացրեց։

1944 թվականի գարնանը «Սոկոնի Վակում Օյլ Կոմպանիա»-ն և «Սինկլեր Օյլ Կոմպանիա»-ն իրենց ներկայացուցիչներն ուղարկում են Իրան, նոր կոնցեսիաներ ստանալու համար բանակցություններ վարելու։ Նույն թվա-

կաններին Սովետական Միությունն իրեն սահմանամերձ շրջաններում կոնցեսիաների համար իրանական կառավարության հետ արդեն բանակցությունների մեջ էր գտնվում, և որովհետև ՍՍՌՄ-ի առաջադրած պայմանները շատ նպաստավոր էին իրանական կառավարության համար, ամերիկացիները վախենալով, որ այդ առաջադրված պայմանները[1] իրանական կառավարության կողմից կօգտագործվեն որպես օրինակ, նախընտրեցին հրաժարվել կոնցեսիաներ պահանջելուց և դիմեցին ամենանենգ միջոցների՝ ձախողել Սովետական Միության և իրանական կառավարության միջև տեղի ունեցող բանակցությունները։ Արդյունքը եղավ այն, որ 1947 թվականի հոկտեմբերի 23-ին ամերիկյան ճնշման տակ, մեջլիսում որոշում ընդունվեց նոր կոնցեսիաների շնորհումը դադարեցնելու մասին։ Այս կապակցությամբ ԱՄՆ-ի դեսպան Ջորջ Ալլենը հայտարարել էր, որ ԱՄՆ-ը պիտի պաշտպանի իրանական կառավարությանը, եթե նա որոշում ընդունի դադարեցնել կոնցեսիաների շնորհումը։ Այս հայտարարությունը արվել է դեռևս մեջլիսի հիշյալ որոշումից մեկ ամիս առաջ։

Ճիշտ է, որ ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստները անմիջապես Իրանում չեն գործում, սակայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «Ստանդարդ Օյլ Կոմպանի Օֆ Նյու Ջերզեյ»-ը համաձայնության գալով «Անգլո-Իրանիան»-ի հետ, 20 տարվա պայմանաժամով իր վրա վերցրեց Իրանի անմշակ նավթի մեծագույն մասի վաճառառանման գործը։ Դրա հետևանքով ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստներին հաջողվեց ոչ միայն խախտել անգլիական նավթային տեգեմոնիան Մերձավոր Արևելքում, այլև «Անգլո-Իրանիան»-ն դարձնել «Ստանդարդ Օյլ Օֆ Նյու Ջերզեյ»-ի կցորդը։ Միայն Իրանի նավթային հարստությունների պետականացումից հետո, այս երկրի ռեսուրսները թալանելու հիշյալ համաձայնությունը հօդս ցնդեց։

Իրաք. Բացառությամբ Իրանի սահմանամերձ մի փոքրիկ հողաշերտից, որը մտնում է «Անգլո-Իրանիան»-ի կոնցեսիոն իրավունքների մեջ, Իրաքի տերիտորիայի մեջ գտնվող բոլոր տարածությունները գտնվում են «Իրաք Պետրոլյում Կոմպանի»-ի և կամ նրա դուստր ընկերությունների կոնցեսիաների մեջ։

Նախքան առաջին համաշխարհային պատերազմը, Միջագետքը հանդիսանում էր օսմանյան կայսրության մի հետամնաց գավառը։ Վաղուց հայտնի էր, որ Մուսուլի վիլայեթում գոյություն ունեն նավթի հարուստ պաշարներ։ Օսմանյան կառավարությունը իր ժամանակին շնորհել էր կոնցեսիաներ ամերիկյան, գերմանական, անգլիական կապիտալիստներին, որոնց միջև ծավալվող պայքարը արգելում էր նրանց նավթի շահագործումը կազմակերպելու։ 1913 թվականին օսմանյան իշխանության մոտ բրիտանական կառավարության ուժեղ միջամտության շնորհիվ հաջողվում է անգլիական և գերմանական կապիտալների մասնակցությամբ կազմակերպել «Տերկիշ

[1] Սովետական Միության առաջադրած պայմաններն էին. ժամկետ 50 տարի փոխանակ 60 կամ 75 տարու, ինչպես ընդունված է կապիտալիստական առաջարկներում։ Այնուհետև, առաջին 25 տարում ակցիաների 49 տոկոսը տրվում է տեղական կառավարությանը, երկրորդ 25 տարում՝ նույն ակցիաների 51 տոկոսը։

[2] New York Times, September 14, 1947.

Պետրոլյում Կոմպանիա»-ն, «Իրաք Պետրոլյում»-ի նախահայրը։ Այս ընկերության մեջ անգլիական կապիտալը «Անգլո-Պերժըն»-ի միջոցով մասնակցում էր 50 տոկոսով, անգլո-հոլանդական կապիտալը «Ռեչ-Շելլ»-ի միջոցով 25 տոկոսով, և վերջապես գերմանական կապիտալը «Դեչ Բանկ»-ի միջոցով 25 տոկոսով, գերիշխողը անգլիական կապիտալն էր։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, Գերմանիայի զարությունի հետևանքով, Սան Ռեմոյի կոնֆերանսում «Ներկիշ Պետրոլյում Կոմպանիա»-ում գերմանական բաժինը փոխանցվեց ֆրանսիացիներին։ Հիշյալ կոնֆերանսում, ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստների շահերը հաշվի չէին առնված, որի հետևանքով Ուոլլ-ստրիտի շրջանակներում մեծ տուզում առաջացավ։ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը բողոք ներկայացրեց անգլիական կառավարությանը։ Վեճը վերջացավ ամերիկյան նավթային մոնոպոլիստների օգտին՝ 23,75 տոկոսի զիջումով։ Սկզբում այդ կոնցեսիայում պիտի մասնակցեին յոթը ամերիկյան ընկերություններ։

1927 թ. այդ յոթը ընկերություններից միայն հինգը կարողացան պայմանները լրացնել։ Հետագայում այդ բոլորը իրենց իրավունքները զիջեցին «Ստանդարդ Օյլ Կոմպանի Օվ Նյու Ջերզեյ»-ին և «Սոկոնի-Վակում Օյլ Կոմպանիա»-ին, որոնք միասին կազմակերպեցին «Նիր Իստ Դեվելոպմենտ Կորպորեշըն»-ը։

Այժմ «Իրաք Պետրոլյում Կոմպանիա»-ի մեջ անգլիական կապիտալը մասնակցում է 26,75 տոկոսով, «Անգլո-Իրանիան»-ի միջոցով, Անգլո-հոլանդական կապիտալը մասնակցում է 23,75 տոկոսով «Ռոյալ-Դեչ-Շելլ»-ի միջոցով։ Ֆրանսիական կապիտալը՝ 23,75 տոկոսով «Կոմպանի Ֆրանսեզ Դե Պետրոլ»-ի միջոցով (35 տոկոսը ֆրանսիական կառավարությանն է պատկանում), ամերիկյան կապիտալը՝ 22,75 տոկոսով «Նիր Իստ Դեվելոպմենտ Կորպորեշըն»-ի միջոցով և վերջապես 5 տոկոսը պատկանում է մի անձի՝ Ռ. Գյուլբենդյանին։ Այսպիսով «Իրաք Պետրոլյում» ընկերության մասնակից են դառնում կապիտալիստական աշխարհի չորս խոշորագույն նավթային մոնոպոլիաները։

Բացի Իրաքի տերիտորիայից «Իրաք Պետրոլյում»-ի կոնցեսիաները իր բազմաթիվ դուստր ընկերությունների միջոցով տարածվում են նաև Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Հորդանանում, պայմանագրային Օմանում, Կատարում, Մուսկատում և Հաղրամաութում։

Այս երկրները գրեթե բոլորն էլ հանդիսանում են անգլիական պրոտեկտորատներ։

Ըստ կոնցեսիոն պայմանագրի «Իրաք Պետրոլյում Կոմպանիա»-ն պարտավոր է Իրաքի կառավարությանը որպես հոնորար վճարել հորատված յուրաքանչյուր տոննայի համար՝ 4 շիլինգ։ Բացի այդ՝ արտահանված նավթի համար, առաջին 4 միլիոն տոննային՝ միանվագ 60 հազար ֆունտ ստերլինգ, իսկ այդ քանակը անցնելուց հետո՝ յուրաքանչյուր մեկ միլիոն տոննային 20 հազար ֆունտ ստերլինգ։ Դրա փոխարեն ընկերությունը վայելում է էքստերիտորիալ լայն իրավունքներ։ Ըստ որում ազատ լինելով բոլոր տեսակի հարկերից և տուրքերից, նա խնայում է հոնորարների արժեքից ավելի բարձր գումարներ։

Այս կոնցեսիոն պայմանագրի մի հոդվածի համաձայն, սկսած 1926 թվականի հուլիսի 16-ից՝ 25 տարվա ժամանակամիջոցով հոնորարների

10 տոկոսը Իրաքի կառավարությունը պարտավոր է վճարել թյուրքական կառավարությանը, իբր թե այն պատճառով, որ առաջին կոնցեսիան շնորհելու ժամանակ Իրաքը կազմել է Օսմանյան պետության մասը։

Երբ, Իրանի օրինակին հետևելով, արաբական մյուս երկրներում, նավթային հարստությունների ազգայնացման օգտին շարժումը մեծ ծավալ ստացավ, ամերիկյան և անգլիական նավթային մոնոպոլիստները դիմեցին հետևյալ նենգ մանյովրին. Իրաքում և Սաուդական Արաբիայում մենաշնորհավարձքը բարձրացրին 50 տոկոսի։ Այդ «զիջումը» կապիտալիստական մամուլում մեծ արձագանք գտավ, և պրոպագանդի առիթ ծառայեց։ Իրականում այս նոր համաձայնությունը կեղծիք է։ Եվ անցյալի փորձը ցույց է տվել, որ նավթային ընկերությունները ցածր մենաշնորհավարձք վճարելու համար դիմել են մինչև անգամ հաշվետետրերի կեղծմանը[1]։

Արաբական թերակղզին.—Մերձավոր Արևելքում գործող ամերիկյան նավթային մոնոպոլիստների մեծ մասը հիմնականում խարսխված են Արաբիայում։ Արաբական տերիտորիան մոտ 3 միլիոն քառակուսի կիլոմետր տարածությամբ, իր մեջ ընդգրկում է Սաուդական Արաբիան, որը թերակղզու ընդհանուր տարածության 50 տոկոսն է գրավում (1580 հազար քառ. կմ.), Եմենը, բրիտանական գաղութ Ադենը, այնուհետև մի շարք շեյխություններ, որոնք առավել կամ նվազ չափով գտնվում են անգլիական ազդեցության տակ, ինչպես Հադրամաութը, Մուսկատը, Օմանը, Պայմանագրային Օմանը, Կատտարը, Կվեյտը և այլն։ Բահրեյն կղզին նույնպես իր դիրքով, ժողովրդով, կուլտուրայով ու տնտեսական և հասարակական դրությամբ հանդիսանում է արաբական երկրների բաղկացուցիչ մի մասը։

Մերձավոր Արևելքի նավթային պաշարների (որոնք վերջին տվյալների համաձայն հաշվվում են ավելի քան 6, 5 միլիարդ տոննա), կեսը գտնվում է Արաբական թերակղզում, իսկ այդ կեսի 70 տոկոսը (այսինքն. 2,25 միլիարդ տոննան) գտնվում է ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստների ձեռքում։

Բահրեյն.—1925 թվականին Բահրեյնի շեյխը կոնցեսիոն իրավունքները տվեց անգլիական նավթային մոնոպոլիստներին՝ «Իստերն Ջեներալ Սինդիկեյտ»-ին, որովհետև կղզին անգլիական պրոտեկտորատ էր, սակայն, 1928 թվականին կոնցեսիան փոխանցվեց ամերիկյան նավթային մոնոպոլիստներին։ Փոխանցումը կատարվեց անգլիական և ամերիկյան նավթային մոնոպոլիստների միջև մղված ուժեղ պայքարից հետո։ Անգլիական մոնոպոլիստների դիմադրությունը շարունակվեց մինչև 1934 թվականը, երբ վերջնականապես կազմակերպվեց «Բահրեյն Պետրոլյում Կոմպանի»-ն, «Ստանդարդ Օյլ Կոմպանի Օվ Կալիֆորնիա»-յի դուստր ընկերությունը։ Այդ ընկերությունը ձևականության համար գրանցվեց որպես բրիտանական ընկերություն Կանադայում։ 1936 թվականին «Բահրեյն Օյլ»-ին բաժնեկից դարձավ նաև «Տեկսաս Օյլ Կոմպանի»-ն։

Կատար և պայմանագրային Օման.—Բահրեյնում ձեռք բերված հաջողությունները «Ստանդարդ Օյլ Օվ Կալիֆորնիա»-յին մղեցին կոնցեսիաներ որոնելու նաև արաբական տերիտորիայի մյուս մասերում։ Այսուհանդերձ,

[1] Տես Новое время, № 26, 24 июня, 1953, стр. 9—10.

ընկերության փորձը և՛ Կատարում, և՛ Պայմանագրային Օմանում հանդիպեց անգլիական նավթային մոնոպոլիստական խմբավորումների ուժեղ դիմադրությանը։ Հետագայում բրիտանական կառավարության ճնշման տակ Կատարի և պայմանագրային Օմանի իշխանությունները համաձայնվեցին կոնցեսիաներ շնորհել «Իրաք Պետրոլյումի»-ի գուսար ընկերություններին՝ «Պետրոլյում Դեվելոպմենտ (Կատար) Լիմիտեդ» և «Պետրոլյում Դեվելոպմենտ (Տրուշըլ Օման)»։

Կվեյտ.—Ամերիկյան նավթային մոնոպոլիստների կողմից կոնցեսիաներ ձեռք բերելու երկրորդ փորձը նույնպես հանդիպում է անգլիական մոնոպոլիստների ուժեղ դիմադրությանը։ Ըստ որում, 1931 թվականին «Իստերն Դրլֆ Օյլ Կոմպանի»-ի դիմումը Կվեյտում կոնցեսիաներ ապահովելու ուղղությամբ հանդիպում է երկրի իշխանության կատեգորիկ մերժմանը և այդ պատահական չէր, Կվեյտը անգլիական պրոտեկտորատ է։ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը միջնորդում է բրիտանական կոլոնիալ օֆֆիսի մոտ հօգուտ «Դրլֆ Օյլ»-ի և վերջապես երկար բանակցություններից հետո համաձայնություն է կայանում ու «Անգլո-Իրանիան»-ի և «Դրլֆ Օյլ»-ի հավասար մասնակցությամբ հիմնվում է «Կվեյտ Օյլ Կոմպանի»-ն, որն այժմ շահագործում է Մերձավոր Արևելքի նավթի պաշարներով ամենահարուստ շրջանը։

Սաուդական Արաբիա.—Դրեթե նույն թվականներին «Ստանդարդ Օյլ Օվ Կալիֆորնիա»-ն կոնցեսիաների համար բանակցություններ է վարում Իբն Սաուդի հետ։ Անգլիական մոնոպոլիստները այստեղ ևս մեծ դիմադրություն են ցուցաբերում և պայքարը անգլիական ու ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստների միջև ընդունում է չափազանց սուր բնույթ։ Այս պայքարը վերջանում է ամերիկյան նավթային մոնոպոլիստական շահերի հաղթանակով։

«Կալիֆորնիա-Արաբիան Ստանդարդ Օյլ Կոմպանի»-ի կոնցեսիան Սաուդական Արաբիայի տերիտորիայում, սկզբնական շրջանում տարածվում էր 576 հազար քառակուսի կիլոմետրի վրա։ Կոնցեսիայի ժամկետն էր՝ 60 տարի։ Կոնցեսիայի վարձքը յուրաքանչյուր տոննա արտադրված նավթի վրա՝ 4 շիլինգ, կամ նրա էկվիվալենտը գոլարով։

1936 թվականին «Իրաք Պետրոլյումը» ապահովում է կոնցեսիաներ Հիջազի և Ասիրի պրովինցիաներում։

Սաուդական Արաբիայի տերիտորիայի որոշ տարածությունները մնացել էին կոնցեսիաներից ազատ։ 1939 թ. միջազգային քաղաքականության խիստ լարվածության պայմաններում առանցքի պետությունները փորձում են ներթափանցել Մերձավոր Արևելք և այդ թվում Սաուդական Արաբիա։ Իրաքում գործող գերմանական դեսպանը Ջիդդա է մեկնում միջնորդելու համար Իբն Սաուդի մոտ հօգուտ իտալական կապիտալիստների մի խմբի, որոնք փորձում էին Սաուդական Արաբիայում նոր կոնցեսիաներ ապահովել։ Այնուհետև, Եգիպտոսի ճապոնական դեսպանը Իբն Սաուդին առաջարկում է, ամերիկյան կոնցեսիոն պայմանների հետ համեմատած շատ ավելի շահագրգիռ պայմաններ։ Վերջապես Սաուդական Արաբիա ներթափանցելու նոր փորձ է անում «Իրաք Պետրոլյումը»։ Սակայն, այս բոլորի դեմ կաշառքի, շանտաժի և ԱՄՆ-ի կառավարության ուժեղ ճնշման և մի-

ջամտության շնորհիվ «Արաբիան-Ամերիկըն Օյլ Կոմպանիա»-ն[1] հաղթական դուրս եկավ, որին միաժամանակ հաջողվեց ընդլայնել իր կոնցեսիայի տակ ընկնող տերիտորիալ տարածությունները 128 հազար քառ. կիլոմետրով, ընդհանուր կոնցեսիոն տարածությունը հասցնելով 704 հազար քառակուսի կիլոմետրի, որը կազմում է Սաուդական Արաբիայի տերիտորիայի 50 տոկոսը։ Սա հանդիսանում է աշխարհում ամենախոշոր միակտոր կոնցեսիան, որը հավասար է ԱՄՆ-ի ողջ տերիտորիայի մեկ տասներորդին կամ անգլիական կղզիների երեք մեծությանը։

Կվեյտի և Իրաքի չեզոք գոտիները.—Այժմ ուժեղ պայքար է մղվում անգլիական և ամերիկյան նավթային մոնոպոլիստական խոշոր խմբավորումների միջև կոնցեսիաներ ձեռք բերելու համար Կվեյտի, Իրաքի և Սաուդական Արաբիայի սահմանների միջև տարածվող Չեզոք գոտում։ Չեզոք գոտին ստեղծվեց 1922 թվականին, որպես հետևանք երեք արաբական պետությունների միջև տեղի ունեցող սահմանային վեճերի։

1939 թվականին «Արաբիան-Ամերիկըն Օյլ Կոմպանիա»-ն կոնցեսիաներ ստացավ Չեզոք գոտու այն մասում, որը գտնվում է Սաուդական Արաբիայի հովանավորության տակ։ Սակայն, որովհետև Չեզոք գոտու մյուս մասերից անջատ գործնականորեն նավթի շահագործումը անհնարին է կազմակերպել, ուստի պայքարը անգլիական և ամերիկյան նավթային մոնոպոլիստների միջև այս կետում նույնպես երկար ժամանակ դեռ կշարունակվեն։

Եգիպտոս.—Այս երկրում շահագործվող նավթային հարստությունները գտնվում են «Անգլո-Իջիպշըն Օյլ Ֆիլդ» ընկերության ձեռքին, որի մեջ մասնակցում են «Ռոյալ Դեչ Շելլ»-ը, «Անգլո-Իրանիան»-ը և եգիպտական կառավարությունը։ Եգիպտոսի նավթային հարստությունների շահագործման մեջ փաստորեն գերիշխում է անգլիական կապիտալը։ Ամերիկյան երկու խմբավորումներ ձեռք են բերել կոնցեսիոն իրավունքներ եգիպտական տերիտորիայում—«Ստանդարդ Օյլ Օվ Նյու Ջերզեյ»-ը և «Սոկոնի-Վակուում»-ը, սակայն, երկուսն էլ գործնական արդյունքների դեռևս չեն հասել։

Սիրիա-Հորդանան-Իսրայել.—Այս երեք երկրներում էլ գլխավոր կոնցեսիոները փաստորեն «Իրաք Պետրոլյում»-ն է, որը գործում է իր դուստր ընկերությունների միջոցով։ Հորդանանում գործում է «Պետրոլյում Դեվելոպմենտ (Տրանսժորդան) Լիմիտեդ» ընկերությունը 75 տարի ժամկետով։ Սիրիայում գործում է «Սիրիա Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ»-ը, իսկ Իսրայելում «Պետրոլյում Դեվելոպմենտ (Պալեստայն) Լիմիտեդ»-ը։

Հանրագումարի բերելով Մերձավոր Արևելքում գործող կոնցեսիոն ընկերությունների մասին վերևում նշվածները, մենք ստանում ենք հետևյալ սխեմատիկ պատկերը.

Մերձավոր Արևելքում գործող գլխավոր ընկերություններն են.

1. «Ակցիս Իրանիան Օյլ Կոմպանի»։

Կոնցեսիոն պայմանագիր. ժամկետ՝ 1993 թվականը։ Կոնցեսիոն տարածություն 160 հազար քառակուսի կիլոմետր։

Գատկոնելիություն՝ բրիտանական, որից

[1] 1944 թվականին «Կալիֆորնիա-Արաբիան Օյլ Կոմպանի»-ն փոխեց իր անունը «Արաբիան-Ամերիկըն Օյլ Կոմպանի»-ի կամ կրճատ «Արամկոի»։

բրիտանական կառավարություն . . . . 56 տոկոս
«Բիրմա Օյլ Կոմպանի» . . . . . 22 »
այլ մասնակիցներ . . . . . 22 »

2. «Խանակին Օյլ Կոմպանի»

Պատկանելիություն՝ «Անգլո Իրանիան Օյլ Կոմպանի», բրիտանական։

3. «Իրաք Պետրոլյում Կոմպանի»

Կոնցեսիոն պայմաններ. ժամկետ՝ 2000 թվականը, կոնցեսիոն տարածություն՝ 302 հազար քառակուսի կիլոմետր։

Պատկանելիություն՝

«Շել Օյլ Կոմպանի»	23,75 տոկոս,	բրիտանական
«Անգլո Իրանիան Օյլ Կոմպանի» . .	23,75 »	»
Ռ. Գյուլբենգյան	5,0 »	
«Կոմպանի Ֆրանսեզ դե Պետրոլ» . . .	23,75 »	Ֆրանսիական
«Ստանդարդ Օյլ Կոմպանի Օվ Ն. Ջ» .	11,875 »	ամերիկյան
«Սոկոնի Վակում Օյլ Կոմպանի» . . .	11,875 »	»
	100 տոկոս	
բրիտանական շահերը	52,5 տոկոս	
ֆրանսիական »	23,75 »	
ամերիկյան »	23,75 »	

«Իրաք Պետրոլյում Կոմպանի»-ի դուստր ընկերություններն են. ա) «Պետրոլյում Դեվելոպմենտ Լիմիտեդ (Կիպրոս)», որը գործում է Կիպրոս կղզում։ բ) «Սրանսժորդան Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ», որը գործում է Հորդանանում։ գ) «Լիբանան Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ», որը գործում է Լիբանանում։ դ) Պետրոլյում Դեվելոպմենտ լիմիտեդ (Պալեստայն), որը գործում է Իսրայելում։ ե) Պետրոլյում Դեվելոպմենտ Լիմիտեդ (Օման և Դհոֆար), որը գործում է Օմանում և Դհոֆարում։ զ) «Պետրոլյում Դեվելոպմենտ Լիմիտեդ (Տրուշըլ Կոստ), որը գործում է Պայմանագրային Օմանում։ է) «Պետրոլյում Դեվելոպմենտ (Կատար) Լիմիտեդ», որը գործում է Կատարում։ ը) «Սիրիա Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ», որը գործում է Սիրիայում։ թ) «Մուսուլ Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ», որը գործում է Իրաքի այն շրջաններում, որտեղ Իրաք Պետրոլյումը պաշտոնապես կոնցեսիոներ չէ։ ժ) «Բասրահ Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ», որը նույնպես գործում է Իրաքում։

4. «Բահրեյն Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ»։

Կոնցեսիոն պայմաններ. ժամկետ՝ 1995 թվականը՝ կոնցեսիոն տարածություն՝ Բահրեյն կղզիները ամբողջությամբ և կղզիների տերիտորիալ ջրերը։

Պատկանելիություն՝ ամերիկյան, որից

«Ստանդարդ Օյլ Կոմպանի Օվ Կալիֆորնիա	50 տոկոս
«Տեկսաս Օյլ Կոմպանի»	50 »

5. «Արաբիան Ամերիկըն Օյլ Կոմպանի»։

Կոնցեսիոն պայմաններ ժամկետ՝ 1999 թվականը, կոնցեսիոն տարածությունը 704 հազար քառակուսի կիլոմետր։

Պատկանելիություն՝ ամերիկյան, որից

«Ստանդարդ Օյլ Կոմպանի Օվ Կալիֆորնիա»	30 տոկոս
«Տեկսաս Օյլ Կոմպանի»	30 »
«Ստանդարդ Օյլ Օվ Նյու Ջերզեյ»	30 »
«Սոկոնի Վակում Օյլ Կոմպանի»	10 »

6.— «Կվեյտ Օյլ Կոմպանի Լիմիտեդ»։

Կոնցեսիոն պայմաններ. ժամկետ՝ 2011 թվականը, կոնցեսիոն տարածություն Կվեյտի տերիտորիան ամբողջությամբ։

Պատկանելիություն՝ ամերիկյան և անգլիական։

«Անգլո Իրանիան Օյլ Կոմպանի»	50 տոկոս բրիտ.
«Գրլֆ Էքսպլորեյշրն Կոմպանի»	50 » ամեր.

Ամփոփ ասած, Մերձավոր Արևելքում, մինչև Իրանի նավթային հարստությունների պետականացվելը, անգլիական կապիտալը ներկայացված էր 49 տոկոսով, ամերիկյան կապիտալը՝ 46 տոկոսով, մնացած երկրները՝ 5 տոկոսով։ Այժմ, վերջին իրադարձությունների հետևանքով, որոնք բխում են անգլո-ամերիկյան նավթային մոնոպոլիստների միջև անընդհատ սրվող հակասություններից, ամերիկյան կապիտալը այս ասպարեզում արդեն դարձել է գերիշխող, և ստացվել է հետևյալ պատկերը.

ԱՄՆ	46 տոկոս
Իրան (պետականացումից հետո)	35 »
Մեծ Բրիտանիան	14 »
Մնացյալ կապիտալիստական երկրները . . .	5 »

Վերջին 7 տարիների ընթացքում ամերիկյան կապիտալ ներդրումները Մերձավոր Արևելքում աճել են 10 անգամ։ 1943 թ. 54,3 միլիոն դոլլար կապիտալ ներդրումների դիմաց 1950 թ. ներդրել են 574,6 միլիոն դոլլար։

Մերձավոր և Միջին Արևելքում նավթարդյունաբերության մեջ ներդրված 1850 միլիոն դոլլար կապիտալից միայն 500 միլիոն դոլլարն է, որ ներմուծված է օտար երկրներից, մնացած 1350 միլիոն դոլլարը ներդրվել է տեղում գոյացած շահույթներից։ Հենց միայն այս երևույթը բավական է, պատկերացնելու համար օտարերկրյա մոնոպոլիստների կողոպտիչ շահագործման մասշտաբները։

Նավթահանման տեսակետից 1952 թվականին անգլիական մոնոպոլիստների բաժինը Մերձավոր Արևելքում, նվազեց 28 տոկոսի, իսկ ամերիկյանը բարձրացվեց 65 տոկոսի։ Մինչդեռ նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը, 1939 թվականին Անգլիայի բաժինն էր 70 տոկոս, ԱՄՆ-ինը միայն 18 տոկոս։ Կոնկրետ թվերով.

1939 թ. 17 միլիոն տոննա Մերձավոր Արևելքի ընդհանուր արտադրությունից
ԱՄՆ-ին բաժին էր ընկնում 2,6 միլիոն տոննա

1950 թ.	87,6 »	»	40,6 »	»
1951 թ.	97,5 »	»	56,0 »	»
1952 թ.	105,0 »	»	67,5 »	»

Ահա այսպես է իրերի դրությունը Մերձավոր և Միջին Արևելքում։ Վերը բերված փաստերը օգնում են ըմբռնելու այն պայքարի էությունը, որը մղվում է ամերիկյան և անգլիական մոնոպոլիստների միջև Մերձավոր և Միջին Արևելքում՝ նավթային հարստությունների տիրապետման համար։

Այժմ այդ պայքարը շարունակվում է և օր չի անցնում առանց կառավարական կրիզիսների և այլ քաղաքական դեպքերի, որոնք արտացոլում են անգլո-ամերիկյան իմպերիալիստների հակասությունները Իրանում, Սիրիայում, Իրաքում, Եգիպտոսում և նույն շրջանի այլ երկրներում։

Այս բոլոր հակասությունները բխում են հենց իմպերիալիզմի էությունից։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստների կազմակերպած ագրեսիվ բլոկի մեջ Մերձավոր և Միջին Արևելքի երկրները ներգրավելու փորձերին խոչոր չափով արգելք է հանդիսանում ազգային-ազատագրական պայքարը, որը մեծ ծավալ է ընդունել և խաղաղության կողմնակիցների թիվը օրավուր աճում է։

Այս հանգամանքը այնքան է խանգարում անգլո-ամերիկյան իմպերիալիստների ներթափանցման գործին, որ մինչև անգամ բուրժուական պատմաբան Եֆրայիմ Սպայզը «ԱՄՆ-ը և Մերձավոր Արևելքը» գրքում ասում է, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Մերձավոր Արևելքի երկրներում ազգային-ազատագրական շարժումները քաջալերվում էին դաշնակից տերությունների կողմից, որովհետև այդ թուլացնում էր Գերմանիայի դաշնակից օսմանյան կայսրությունը, սակայն, պատերազմից հետո, այն ժամանակ, երբ նախկին օսմանյան կայսրության մաս կազմող երկրները մանդատով հանձնվեցին Անտանտայի երկրներին, այդ ժամանակ այս նույն շարժումը դիտվեց որպես անհանդուրժողության աղբյուր[1]։

Չնայած, օտարերկրացիների դրդումով՝ տեղական իշխանությունների կողմից ծավալվող հալածանքին ու հետապնդումներին, Մերձավոր և Միջին Արևելքում գործող պրոգրեսիվ կազմակերպությունների համախոհների թիվը անընդհատ աճում է։

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ժողովուրդները անդուլ պայքար են մղում դաղութային ստրկության դեմ՝ ազգային անկախություն ձեռք բերելու համար, պայքար, որի ավանդարդում գտնվում է բանվոր դասակարգը։

Գերմանական ֆաշիզմի և ճապոնական իմպերիալիզմի դեմ Սովետական Միության տարած պատմական մեծ հաղթանակները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարի համար։

Այդ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները այժմ ուղղված են ամերիկյան, անգլիական և ֆրանսիական իմպերիալիզմի դեմ, ներքին ռեակցիայի և իշխանության գլուխ անցած իմպերիալիստների վարձկանների դեմ, որոնք հիտլերյան Գերմանիայի ջախջախումից հետո, սկսել են ծառայել Ուոլլ-ստրիտի և Սիտիի կապիտալին։

Վերջին քաղաքական իրադարձությունները ցույց են տալիս, որ Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդները ծավալում են ավելի վճռական պայքար իմպերիալիստական պետությունների գիշատիչ շահագործումից ազատագրվելու համար։

Պրոգրեսիվ պարտիաների գեկավարությամբ, այդ երկրներում ստեղծվել են պրոֆմիութենական, գյուղացիական, երիտասարդական, առաջավոր կանանց, խաղաղությունը պաշտպանողների և նման այլ պրոգրեսիվ կազմակերպություններ, որոնք ծավալում են պայքարը իմպերիալիզմի դեմ։

Դեմոկրատական և հակաիմպերիալիստական հիշյալ կազմակերպությունների անխոնջ պայքարը և նրանց շուրջը հավաքված համախոհ ու-

[1] *E. A. Speiser*, The United States and the Near East, Cambridge, Mass., 1950, pp. 92--93.

ժերի աճը վիժեցնում են անգլո-ամերիկյան իմպերիալիստների ռազմական ու տնտեսական նենգ պլանները, որոնց նպատակն է Մերձավոր և Միջին Արևելքը վերածել հակասովետական, հակադեմոկրատական ռազմական պլացդարմի և ստրատեգիական բազայի։

Ժողովրդական լայն շարժման մեջ վտանգ տեսնելով իրենց ավազակային պլանների համար, անգլո-ամերիկյան իմպերիալիստները ամեն ջանք գործադրում են, որպեսզի իշխանության գլուխ կանգնած և իր նեղ դասակարգային շահերը հետապնդող կալվածատիրական-ֆեոդալական կլիկի օգնությամբ ճնշեն տեղական ժողովուրդներին և խափանեն մասսաների ազգային-ազատագրական շարժումը։

Սակայն, ամերիկյան և անգլիական իմպերիալիստների գիշատիչ քաղաքականությունը դատապարտված է տապալման, քանի որ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ժողովուրդները ավելի ու ավելի մեծ վճռականությամբ են հանդես գալիս իմպերիալիզմի ճնշման դեմ, հանուն խաղաղության, հանուն իրենց երկրների հարստությունները և իրենց սեփական ճակատագիրը անձամբ տնօրինելու իրավունքի։